15/81

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«10» 01 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0001-23

Ձեռնարկողը՝ ***«Հայնախագիծ» ԲԲԸ***
ՀՀ, ք. Երևան, Չարենցի 1

Գործունեությունը՝ ***Շիրակի մարզի «Շիրակ-3» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի (ՄՄՀՏՊՓ) նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվություն***
ՀՀ, Շիրակի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր՝ 12 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0001-23
«10» 01 2023թ.

Շիրակի մարզի «Շիրակ-3» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի (ՄՄՀՏՊՓ) շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«Հայնախագիծ» ԲԲԸ
Փաստաթղթի տեսակը՝	Հիմնադրութային փաստաթուղթ
Ներկայացված նյութեր՝	ՄՄՀՏՊՓ նախագծեր, շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման /ՇՄԱՌԳ/ հաշվետվություն
Իրականացման վայրը՝	ՀՀ, Շիրակի մարզի «Շիրակ-3» միկրոռեգիոնում ընդգրկված 10 գյուղական բնակավայրեր

Ներածական մաս. Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 1-ին մասի՝ «Շիրակ-3» ՄՄՀՏՊ փաստաթուղթը հանդիսանում է քաղաքաշինության բնագավառին վերաբերող հիմնադրութային փաստաթուղթ:

«Շիրակ-3» ՄՄՀՏՊՓ նախագծերը ներառում են՝ Ամասիա խոշորացված համայնքի Ամասիա, Արեգնադեմ, Բանդիվան, Բյուրակն, Գտաշեն, Կամխուտ, Հովտուն, Մեղրաշատ, Ողջի և Ջրաձոր բնակավայրերը:

«Շիրակ-3» ՄՄՀՏՊՓ նախագիծն ընդգրկում է 20468.30 հա մակերեսով տարածք, որտեղ բնակչության թիվը ներկայումս կազմում է 4257 մարդ, այդ թվում.

հհ	*Բնակավայրերի անվանումը*	*Բնակչություն, մարդ*	*հհ*	*Բնակավայրերի անվանումը*	*Բնակչություն, մարդ*
1	Ամասիա	1634	6	Կամխուտ	11
2	Արեգնադեմ	439	7	Հովտուն	154
3	Բանդիվան	217	8	Մեղրաշատ	357
4	Բյուրակն	635	9	Ողջի	363
5	Գտաշեն	207	10	Ջրաձոր	240

«Շիրակ-3» ՄՄՀՏՊ թվով 10 բնակավայրերի և դրանց հողերի զբաղեցրած տարածքը ստորև ներկայացված է աղյուսակով.

հհ	Բնակավայրերի անվանումը	Բնակավայրերի տարածքը, հա	հհ	Բնակավայրերի անվանումը	Բնակավայրերի տարածքը, հա
1	Ամասիա	4966.25	6	Կամխուտ	*
2	Արեգնադեմ	3143.35	7	Հովտուն	1238.96
3	Բանդիվան	1076.84	8	Մեղրաշատ	1147.91
4	Բյուրակն	2402.56	9	Ողջի	1699.26
5	Գտաշեն	3640.89	10	Ջրաձոր	1152.28

Քանի որ Կամխուտ բնակավայրը նախկինում ընդգրկված է եղել Գտաշեն համայնքում, դրա տարածքը ներառված է եղել Գտաշենի հողերի մեջ:

ՄՄՀՏՊՓ նախագծի հիմնական նպատակն է՝ միկրոռեգիոնում ներառված բնակավայրերի տարածական պլանավորման միջոցով բարենպաստ կենսամիջավայրի ձևավորումը, կայուն զարգացման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծումը, ինչպես նաև համայնքների սոցիալ-տնտեսական զարգացմանը և շրջակա միջավայրի և պատմամշակութային արժեքների պահպանմանն ուղղված միջոցառումների մշակումը:

Սույն փաստաթղթի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման վերլուծությունները կատարվել են նախագծի դրույթներին համապատասխան, հաշվի առնելով ծրագրում ներառված բնակավայրերում զարգացման ծրագրերը: Ծրագրում ընդգրկված Ամասիա համայնքի բնակավայրերի տարածքային քաղաքաշինական խնդիրների լուծման ընթացքում շրջակա միջավայրի պահպանության արդյունավետ կազմակերպման համար համալիր կերպով գնահատվել են առկա բնապահպանական խնդիրները, գոյություն ունեցող իրավիճակը և ընտրվել են զարգացման այնպիսի սկզբունքներ, որոնք թույլ կտան ներդաշնակորեն լուծել սոցիալական, տնտեսական և բնապահպանական խնդիրները:

Նկարագրական մաս. Շիրակի մարզի դիտարկվող տարածքը գտնվում է հանրապետության հյուսիս-արևմտյան մասում և հարակից է Արմավիրի, Արագածոտնի և Լոռու մարզերին: Մարզի արևմտյան սահմանը Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի պետական սահմանն է, հյուսիսում՝ Վրաստանի պետական սահմանը: Մարզկենտրոնը Գյումրի քաղաքն է: Շիրակի մարզը զբաղեցնում է 2680 քառ. կմ, իր մեջ ընդգրկում է Արթիկի, Ախուրյանի, Անիի, Ամասիայի և Աշոցքի տարածաշրջանները: Մարզի բնակչությունը 231.0 հազ. մարդ է, բնակչության խտությունը կազմում է 86.2մարդ/կմ^2:

«Շիրակ-3» միրոռեգիոնալ հատվածում տնտեսական զարգացման հիմնական ոլորտը գյուղատնտեսությունն է: Տարածաշրջանի առավել զարգացած ճյուղն անասնապահությունն է, որով զբաղվում են տնային տնտեսությունների ավելի քան 90%-ը: Առավել զարգացած ուղղություններն են՝ կաթնատու և մսատու տավարաբուծությունն ու ոչխարաբուծությունը: Բայց գյուղացիական տնտեսությունների զգալի մասը զբաղվում է նաև խոզաբուծությամբ, թռչնաբուծությամբ, այծաբուծությամբ, ճագարաբուծությամբ և մեղվաբուծությամբ, քիչ քանակությամբ պահում են նաև ձիեր և ավանակներ:

Զարգացած են նաև կաթի վերամշակման և պանրի արտադրության ուղղությունները: Կաթի վերամշակման խոշոր ձեռնարկություններ են գործում Բանդիվանում և Ամասիայում: Արեգնադեմ բնակավայրում ներկայումս ընթացքի մեջ է սպանդանոցի և ժամանակակից սանիտարական պահանջներին համապատասխանող անասնագոմի շինարարությունը: Ամասիայում գործում է բրդի վերամշակման գործարան: Թիրախային տարածաշրջանի Արեգնադեմ, Գտաշեն և Ամասիա բնակավայրերում գործում են «Արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվներ, որոնք, պետության կողմից համաֆինանսավորմամբ տրամադրված գյուղատնտեսական տեխնիկայով, որոշակի գյուղատնտեսական աշխատանքների իրականացման ծառայություններ են մատուցում գյուղացիական տնտեսություններին, հատկապես՝

հողամշակության, խոտհնձի և արոտների արդյունավետ կառավարման բնագավառներում:

Մարզի հողատարածքներից 16910 հա-ն դրված է ընդերքօգտագործման տակ: Այս ոլորտում ներգրավված են թվով 65 կազմակերպություններ, որոնք հիմնականում զբաղված են տարատեսակ շինանյութերի՝ բազմերանգ տուֆերի, ֆելզիտների, բազալտների, անդեզիտների, դացիտների, հրաբխային խարամների, պեմզայի և ավազների, արդյունահանմամբ: Պահանջարկ և հնարավորություններ չլինելու պատճառով դրանցից շուրջ երկու տասնյակը չեն գործում, իսկ մնացածը գործում են թերծանրաբեռնվածությամբ: Մարզի Աշոցքի, Ախուրյանի, Արթիկի տարածաշրջաններում առկա են նաև հանքային ջրաղբյուրներ, իսկ Ամասիայի տարածաշրջանում՝ մետաղական օգտակար հանածոների հանքաերևակումներ /պղնձի, նիկելի, ոսկու, երկաթի, կոբալտի և այլն/, որոնց հետագա ուսումնասիրությունը և արդյունաբերական գնահատումը մեծ նշանակություն կունենա մարզի տնտեսության հետագա զարգացման համար:

«Շիրակ-3» միկրոռեգիոնում օգտակար հանածոներից մետաղական. բազմանպատակ օգտագործման հումքի, լցանյութերի և բալաստային հումքի, երեսպատման և բնագույն քարերի հանքավայրեր բացահայտված չեն:

Տարածքում կան բնական, բուժական, առողջարանային, հանքահումքային և այլ պաշարներ: Դրանցից առավել նշանակալի են՝ Ամասիայի բյուրեղային կրաքարերի հանքավայրը, Ամասիայի սերպենտինիտի հանքավայրը, Արեգնադեմի բազալտի հանքավայրը, Ջրաձորի կավային ապարների հանքավայրը: Տարածաշրջանը հարուստ է ստորերկրյա ջրային պաշարներով, որոնք գոյանում են Արագած լեռան ձնահալոցքից, տեղումներից եւ բնական աղբյուրներից: Հաշվառված ընդհանուր առմամբ 31 ատորերկրյա ջրային աղբյուրներից 11-ը գտնվում է Ամասիայի տարածքում, 4-ը՝ Բանդիվանի, 7-ը՝ Հովտունի, 9-ը՝ Ջրաձորի տարածքում: Հարկ է նշել, որ դրանցից ներկայումս օգտագործվում է ընդամենը 13-ը:

«Շիրակ-3» համայնքների շրջակա միջավայրի վրա տեխնածին ազդեցության հիմնական գործոններն են.

- մթնոլորտային օդի աղտոտումն արդյունաբերական ձեռնարկությունների, բնակկոմունալ սեկտորի ջեռուցման և ավտոտրանսպորտի արտանետումներով,
- մակերևութային ջրերի աղտոտումն արտադրական հոսքաջրերով և կենցաղային կեղտաջրերով,
- հողերի աղտոտումը կոշտ կենցաղային թափոններով,
- աղմուկը և էլեկտրամագնիսական ճառագայթումը,
- անտառի անկանոն օգտագործումը, որը համայնքների շրջակայքում էներգետիկ ճգնաժամի ժամանակ հանգեցրել է անտառային տարածքների և կենսաբազմազանության կրճատմանը:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության բնական գործոնների թվին են դասվում սողանքները, սելավները և հողերի էրոզիան:

Ներկայումս «Շիրակ-3» միկրոռեգիոնում ընդգրկված համայնքներում մթնոլորտային օդն աղտոտվում է արդյունաբերական ձեռնարկությունների, բնակելի և հասարակական շենքերի ջեռուցման անհատական սարքերի և ավտոտրանսպորտի արտանետումներով:

Հիմնականում արդյունաբերական ձեռնարկությունները պատկանում են սանիտարական վտանգավորության IV-V դասին, արտադրական արտանետումները աննշան են: Ֆոնային աղտոտվածությունը աղտոտող բոլոր նյութերով համայնքներում զգալիորեն ցածր է սահմանային թույլատրելի կոնցենտրացիաներից (ՍԹԿ): Արտադրական արտանետումները հիմնականում առաջանում են բնական գազի և դիզվառելիքի այրումից:

«Շիրակ-3» համայնքներում ջեռուցման ժամանակահատվածում վնասակար արտանետումների հաշվարկները կատարված են գազի և փայտի ծախսից ելնելով:

Գազիֆիկացված համայնքների համար ընդունված է ջեռուցում՝ միջինացված տվյալներով՝ 80% գազ, 20% փայտ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ կան համայնքներ, որոնք գրեթե ամբողջությամբ գազաֆիկացված են, իսկ որոշները՝ մասնակի:

Մթնոլորտ վնասակար արտանետումների մասին տեղեկությունները և տնտեսությանը հասցված վնասի արժեքները բերված են աղյուսակում.

Անվանումը	Արտանետումների քանակը, տ/տարի ներդրման %	Տնտեսությանը հասցված տնտեսական վնասը, մլն. դրամ/տարի
1.Բնակարանների ջեռուցում	440,3/50,25	20,25
2. Ավտոտրանսպորտ	220,55/36,97	18,62
3. Արդյունաբերություն	170,52/12,78	8,068
Ընդամենը	831,37/100	46,94

Տարածքի համալիր գնահատականը տրված է՝ տեղանքի կլիմայական պայմանների, մթնոլորտային օդի աղտոտվածության մակարդակի, արդյունաբերական պոտենցիալի, բնակչության և ավտոտրանսպորտի խտության ցուցանիշների հաշվառմամբ:

«Շիրակ-3» համայնքների համար անտրոպոգեն թույլ ազդեցության գոտին կազմում է 20468,30 հա: Հիգիենիկ իրավիճակով տարածքը վտանգ չի ներկայացնում: Տարածքի համալիր գնահատականը՝ բարենպաստ:

«Շիրակ-3» համայքները գտնվում են Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածքում: Ախուրյան գետի ջրի որակը Ամասիա գյուղից ներքև, Գյումրի քաղաքից վերև, Գյումրի քաղաքից ներքև և Բագարան գյուղից ներքև հատվածներում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս). Ամասիա գյուղից ներքև՝ պայմանավորված ամոնիում իոնով և երկաթով, Գյումրի քաղաքից վերև՝ երկաթով, Գյումրի քաղաքից ներքև՝ ամոնիում, նիտրիտ իոններով, երկաթով և կախութային չոր նյութերով, Բագարան գյուղից ներքև՝ երկաթով և կախութային չոր նյութերով:

ՀՀ կառավարության 2017 թվականի մարտի 9-ի N 240-Ն որոշմամբ հաստատվել է Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածքի 2017-2022 թվականների կառավարման պլանը և արդյունավետ կառավարմանն ուղղված առաջնահերթ միջոցառումները: Սակայն ջրային ռեսուրսների պահպանության և արդյունավետ օգտագործման բնագավառներում դեռևս առկա են մի շարք հիմնախնդիրներ, որոնց լուծման համար անհրաժեշտ է վերագործարկել կամ նորովի կառուցել կեղտաջրերի մաքրման Գյումրու կայանը, Մանթաշի ջրամբարին և հարակից տարածքին շնորհել բնության հատուկ պահպանվող տարածքի կարգավիճակ, մարզի հանքային ջրաղբյուրների օգտագործման համար ստեղծել բարենպաստ բիզնես միջավայր:

Գյուղական բնակավայրերում աղմուկի աղբյուր է հանդիսանում ավտոտրանսպորտը: Գյուղերում ճանապարհները հիմնականում տեղական նշանակության են և մեքենաների անցուդարձը ցածր է: Այդ պատճառով դիտարկված են ընդհանուր «Շիրակ-3» համայնքներում:

Տրանսպորտային հոսքերի աղմուկը առաջանում է մեքենաների աղմուկից և կապված է տրանսպորտի արագությունից և շարժման ինտենսիվությունից:

«Շիրակ-3» համայնքների կենտրոնական փողոցներում առավելագույն երթևեկությունը ընդունվել է մոտավոր 350 մեքենա/ժամում:

Ավտոմեքենաների մի կարգային հոսքի դեպքում, երթևեկության ինտենսիվությունից կախված աղմուկի մակարդակի որոշման նոմոգրամմաների համաձայն աղմուկի միջին մակարդակը կազմում է 57-63դԲԱ՝ փողոցի բանուկ մասի եզրից 7.5մ հեռավորության վրա: Այսպիսով կարելի է եզրակացնել, որ «Շիրակ-3» համայնքներում ձայնի էկվիվալենտ մակարդակը 250մ հեռավորության վրա ճանապարհից, հաշվի առնելով կառուցապատված զանգվածը կկազմի 43-50 դԲԱ, նորման 45-55 դԲԱ:

«Շիրակ-3» համայնքների հողային ֆոնդի առկայության համեմատական վերլուծությունը բացահայտում է գյուղատնտեսության տնտեսական զարգացման ներուժը և դրա առաջնային նախընտրելիության աստիճանը:

«Շիրակ-3» ՄՄՀՏՊՓ-ի նպատակային նշանակության հողերի բաշխումը 01 հուլիսի 2021թ. դրությամբ (Ձև 22) ստորև ներկայացված է աղյուսակում.

hh	Նպատակային նշանակության հողեր	Ամասիա	Արեգնադեմ	Բանդիվան	Բյուրական	Գտաշեն	Հովտուն	Մեղրաշատ	Ողջի	Ջրաձոր	Ընդամենը
1.	Գյուղատնտեսական	4594.36	2919.83	918.87	2015.13	3399.04	1171.45	1034.77	1464.38	935.93	18453.76
2.	Բնակավայրերի	188.95	87.83	66.24	168.25	117.34	28.39	37.35	141.16	75.54	911.05
3.	Արդյունաբերության	49.73	11.04	51.36	40.71	21.09	12.68	19.30	11.84	9.65	227.40
4.	Էներգետիկայի	10.49	9.90	6.45	8.76	2.03	4.25	1.45	2.69	11.66	57.68
5.	Հատուկ պահպանվող	64.87	8.70	30.51	28.82	12.27	19.47	0.75	3.77	41.05	210.21
6.	Հատուկ նշանակության	0.51	-	-	107.59	31.45	-	42.70	67.64	-	249.89
7.	Անտառային	33.44	50.42	-	-	-	-	-	-	24.66	108.52
8	Ջրային	23.9	55.63	3.41	33.3	57.67	2.72	11.59	7.78	53.79	249.79
9	Ամբողջը	4966.25	3143.35	1076.84	2402.56	3640.89	1238.96	1147.91	1699.26	1152.28	20468.30

Գյուղատնտեսական հողերի բաշխումն ըստ հողատեսքերի հետևյալ պատկերն է ներկայացնում (հեկտար).

02543163
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

1. Վարելահող – 6448.8
2. Բազմամյա տնկարկներ՝ - 5,86
3. Խոտհարքներ՝ - 1541,33
4. Արոտներ՝ - 9368,57
5. Այլ հողատեսքեր՝ - 1089,20

Ընդամենը՝ 18453.76

Ներկայացված թվերից պարզ է, որ գյուղատնտեսական հողերի մեջ ամենամեծ ծավալները բաժին են ընկնում արոտներին՝ 50,76% և վարելահողերին՝ 34,94%:

Տարածաշրջանում ոռոգվող վարելահողերի քանակը կազմում է 19.14%:

Թիրախային տարածաշրջանում չմշակվող հողերի գերակշիռ մասը՝ 89.4%-ը վարելահողեր են, 7.0%-ը՝ խոտհարքներ և 3.6%-ը՝ արոտավայրեր:

Հողերի չմշակման հիմնական պատճառներն են.

- ցածր եկամտաբերությունը (61.4%),
- հողի բերրիության ցածր մակարդակը (19.3%),
- սեփականատիրոջ բացակայությունը (9.3%),
- գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործման անմատչելիությունը (6.7%):

«Շիրակ-3» համայնքներում հաճախակի են աղբի կուտակումը հենց բնակելի տների բակերում, բացի դրանից, աղբահանումը կատարվում է անկանոն, ինչը հանգեցնում է համայնքների սանիտարական վիճակի վատացմանը:

Հիգիենիկ և համաճարակային տեսչության տարածքային կենտրոնի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ.

- Աղբահանումը կատարվում է անկանոն,
- Հատկացված տարածքը, որը գտնվում է համայնքների վարչական սահմաններում, կենցաղային կոշտ թափոնների տեղափոխման, վնասազերծման, վերամշակման կազմակերպությունների և կառույցների հողամասերի և դրանց սանիտարական պահպանման գոտիների չափերով չի համապատասխանում «Արդյունաբերական կազմակերպությունների նախագծման սանիտարական նորմեր» ՍՆ թիվ 245-71 և «Քաղաքաշինության, քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» 2.07.01-81 ԱՆ և Կ պահանջներին: Տարածքները պարսպապատված չեն, անբարեկարգ են, չկան համապատասխան պայմաններ կոնտեյներների և աղբատար փոխադրամիջոցների լվացման և ախտահանման համար: Տարածքում կուտակված աղբը մշտապես ենթարկվում է ինքնայրման: Աղբավայր տանող ամբողջ ճանապարհը և մոտակա տարածքը խիստ աղտոտված են, ուստի այդ ժամանակավոր աղբավայրը ավելի նպատակահարմար է ենթակաել կոնսերվացման:

Ընդամենը «Շիրակ-3» բնակավայրերում 7.43 հա, 1 բնակչին ապահովելով 12.18 ք.մ: Աղբավայր առկա է միայն Ամասիայում, տարածքը գտնվում է Բանդիվանում կոմունալ ենթակառուցվածքների գոտում և զբաղեցնում է 0.87 հա:

Աղբահանությունը կատարվում է ամեն բնակավայրում տեղադրված 8-12 աղբարկղների միջոցով և տեղափոխելով աղբավայր նշված տեղում: Թափոնների ընդհանուր քանակը ներկա իրավիճակում կազմում է 1071 տ/տարի:

«Շիրակ-3» ՄՄՀՏՊ փաստաթղթի համայքներում առկա արդյունաբերական բոլոր ձեռնարկությունները պատկանում են սանիտարական վտանգավորության IV-V դասին: Արդյունաբերական թափոնները բացակայում են: Ոչ օգտագործելի թափոնները գործող օբյեկտների բնույթից կախված, թունավոր չեն և պատկանում են սանէպիդկայանի կողմից համաձայնեցված վայր տեղափոխվող թափոնների խմբին: Այս թափոնները

շինարարական, ավտոտրանսպորտային ձեռնարկություններում առաջացած թափոններն են՝ շինարարական աղբ, ավտոմեքենաների մասեր, օգտագործված տարաներ:

Օրգանական ծագման թափոնները դասակարգվում են հետևյալ կերպ.

N 1 կարգ՝ մարդու անատոմիական թափոններ (հյուսվածքներ, օրգաններ, մարմնի մասեր):

N 4 կարգ՝ Առարկաներ և պլաստմասայից թափոններ (ներարկիչներ, ճկափողեր և այլն):

N 6 կարգ՝ Օրգանական նյութերով աղտոտված թափոններ (արյունով և այլ նյութերով աղտոտված բամբակը և այլն):

Դասվում են վտանգավորության 3-րդ դասին, ծածկագիրն է՝ 9700100 01 05 3: Այս թափոնների հնարավոր վարակազերծումը համարվում է քիմիական վնասազերծումը սպիրտի և ֆորմալինի լուծույթով և խորը թաղումը գերեզմանատանը հատկացված տարածքում: Թափոնները առաջանում են առողջապահության բնագավառի հաստատություններում:

Թափոնները դասակարգվում են հետևյալ կերպ.

Ա) Ոչ վարակիչ թափոններ: Այս թափոնները կազմում են ընդհանուր թափոնների մոտ 90%-ը: Սրանք իրենց բաղադրությամբ նման են կենցաղային թափոններին, քանի որ վարակի տարածման մանրէներ չեն պարունակում: Այս թափոնների շարքին են պատկանում գրասենյակային աղբը՝ թուղթ, կարտոն, փաթեթավորման նյութեր, թերթեր և այլն: Տարեկան քանակը կազմում է 0.24տ: Այս թափոնները հեռացվում են ՀՀԿ-ի կողմից հատկացված աղբավայր: Դասվում են վտանգավորության 4-րդ դասին: Ծածկագիրն է՝ 91200400 01 00 4:

Բ) Վարակիչ թափոններ: Վարակիչ թափոնները դրանք օրգանական ծագման թափոններն են: Ընդհանուր քանակը կազմում է մոտ 6,18 կգ/օր:

«Շիրակ-3» ՄՄՀՏՊ փաստաթղթում ներառված համայնքներում տեղակայված գերեզմանոցների ընդհանուր քանակը 9-ն է, իսկ զբաղեցրած տարածքը՝ 20,46 հա:

Գերեզմանոցները գործող են: Գերեզմանոցներում սանիտարական պահպանման գոտին պահպանված չէ, ուստի ներկա իրավիճակը բարելավելու և շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա ազդեցությունը մեղմելու նպատակով առաջարկվում է գերեզմանոցների եզրագծով իրականացնել տարածաշրջանի բուսական աշխարհին բնորոշ ծառատունկ:

«Շիրակ-3» տարածքի՝ գյուղական բնակավայրերում, կանաչապատման հիմնական մասը ընկնում է սահմանափակ օգտագործման կանաչի բաժնին, որը տեղակայված է տնամերձ հողամասերում: Ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքները՝ պուրակներն ու զբոսայգիները ներկայացված են խիստ սահմանափակ հատվածներով, քանի որ գյուղերում բացակայում են զբոսայգիներն ու պուրակները: Միայն Ամասիա գյուղում առկա է՝ 0.51 հա զբոսայգի:

Նախագծման համար առաջնային ուղղություններ են դառնում տարածքային զարգացման այն հիմնական ուղղությունները, ներդրումների համար նպաստավոր ոլորտների և գոտիների կազմակերպումը, որոնք կխթանեն.

- արտադրության հիմնական ճյուղերի զարգացումը,
- հնարավոր ռեկրեացիոն գոտիների կազմակերպումը, շրջակա միջավայրի բարելավմանը և պահպանմանը,
- ճարտարագիտա-ճանապարհային և սոցիալ-կենցաղային ենթակառուցվածքների զարգացումը, պատմամշակութային ժառանգության պահպանությանը,
- բնական և տեխնածին վտանգավոր երևույթներից տարածքի պաշտպանությանը, սահմանամերձ տարածքներում բնակչությանան վտանգության ապահովումը,

02543163 ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

- միջհամայնքային ճանապարհների-կապերի վերանայում և կազմակերպում, հիմնական գործառնական գոտիների վերանայում և հստակեցում,
- զբոսաշրջության խթանման և փոքր ու միջին բիզնեսի զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծման, ինչպես նաև.
- չգազիֆիկացված բոլոր համայնքների գազիֆիկացում,
- գյուղական համայնքներում ոռոգման ջրի ցանցի ընդլայնում,
- բոլոր համայնքներում կոյուղու ցանցերի անցկացում,
- սելավատար առուների կառուցում,
- տնտեսակենցաղային կեղտաջրերի փոքր հզորության մաքրման կայանների կառուցում,
- աղբավայրերի նախատեսում սանիտարական գոտիների պահպանմամբ,
- «Շիրակ-3» միկրոեռեգիոնի բնակավայրի կեղտաջրերի մաքրման կայանի կառուցում:

Հողօգտագործմանը վերաբերող զարգացումներում, բացառությամբ Ջրաձոր բնակավայրի, նախատեսվում է «Շիրակ-3» միկրոեռեգիոնի բնակավայրի հողերի տարածքում որոշակի, ոչ ծավալուն շտկումների կատարում, տարբեր նշանակության հողերի ներկայումս չօգտագործվող հատվածներից բնակելի տնամերձ կամ հասարակական կառուցապատման փոփոխություններ:

Նախագծով նախատեսված հողերի նպատակային նշանակության, հողատեսքերի գործառական նշանակության փոփոխությունները ներկայացվում են ստորև.

ՇԻՐԱԿ-3 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԻ ՏԵԽՆԻԿԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ				
	Ցուցանիշները	Չափման միավորը	Փաստացի	Հեռանկարային
1	Միկրոռեգիոնի համակցված փաստաթղթի դեպքում նախագծվող համայնքների վարչական սահմաններում ընդգրկված հողերի ընդհանուր մակերեսը	հա	20468.30	20468.30
2	Բնակավայրերի հողեր	հա	911.05	912.20
3	Արդյունաբերության, ընդերքօգտագործման եվ այլ արտադրական նշանակության հողեր	հա	227.40	220.02
4	Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր	հա	57.68	58.77
5	Հատուկ պահպանվող տարածքների հողեր	հա	210.21	210.21
6	Հատուկ նշանակության հողեր	հա	249.89	249.89
7	Գյուղատնտեսական նշանակության հողեր	հա	18453.76	18462.01
8	Անտառային հողեր	հա	108.52	108.52
9	Ջրային հողեր	հա	249.79	246.68

«Շիրակ-3» տարածական պլանավորման նախագիծը ընդգրկում է 20468,30 հա տարածք, այդ թվում՝

- գյուղատնտեսական նշանակության՝ 18453,76 հա,
- բնակավայրերի՝ 911,05 հա,
- արդյունաբերական, ընդերքօգտագործման՝ 227,40 հա,
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի՝ 57,68 հա,
- հատուկ պահպանվող տարածքներ՝ 210,21 հա,
- անտառային՝ 108,52 հա,

- ջրային՝ 249,79 հա,
- հատուկ նշանակության՝ 249,89 հա,
- պահուստային՝ բացակայում են:

Ներկայումս բնակչության թիվը կազմում է 4257 մարդ: Նախատեսված է բնակչության աճ 10%-ի չափով: Հեռանկարում բնակչության թիվը կկազմի 6140 մարդ: Տնտեսության զարգացման հիմնական ճյուղերն են այգեգործությունը, գինու և կոնյակի արտադրությունը, սննդի արդյունաբերությունը, առևտուրը, խաղողագործությունը, ձկնաբուծությունը, մեղվաբուծությունը, անասնապահությունը, հողագործությունը, հացահատիկային կուլտուրաների մշակումը:

Հեռանկարում համայնքների մթնոլորտային օդի աղտոտման աղբյուրներ կհանդիսանան արդյունաբերական ձեռնարկությունների, բնակելի և հասարակական շենքերի ջեռուցման անհատական սարքերի և ավտոտրանսպորտի արտանետումները:

Հեռանկարում բնակչության աճի հետ մեկտեղ միկրոռեգոնալ տարածական փաստաթղթի շրջանակներում ներառված ձեռնարկությունների համար հնարավոր է 5-10% արտադրողականության աճ:

Ներկա իրավիճակում արդյունաբերական արտանետումները կազմում են 170,52տ/տարի, իսկ հնարավոր աճի դեպքում արտանետումների ընդհանուր քանակը կավելանա ևս 17,05տ/տարի-ով:

Ջեռուցման ժամանակ վնասակար արտանետումները ներկայումս կազմում են 440,3տ/տարի, իսկ հնարավոր աճի դեպքում արտանետումների ընդհանուր քանակը կավելանա ևս 44,03տ/տարի-ով:

Ավտոտրանսպորտի արտանետումները ներկայումս կազմում են 220,55տ/տարի, իսկ հնարավոր աճի դեպքում արտանետումների ընդհանուր քանակը կավելանա ևս 22,05տ/տարի-ով:

Մթնոլորտ վնասակար արտանետումների քանակը ջեռուցումից, արդյունաբերությունից և ավտոտրանսպորտից կազմում է 831,37 տ/տարի:

Մթնոլորտ վնասակար արտանետումներից «Շիրակ-3» համայնքներից տնտեսությանը հասցված տնտեսական վնասը կազմում է 46,94 մլն. դրամ տարի:

Տարածքի համալիր գնահատականը տրված է տեղանքի կլիմայական պայմանների, մթնոլորտային օդի աղտոտվածության մակարդակի, արդյունաբերական պոտենցիալի, բնակչության և ավտոտրանսպորտի խտության ցուցանիշների հաշվառմամբ: Անտրոպոգեն թույլ ազդեցության գոտին կազմում է 20468,30 հա: Ըստ հիգիենիկ գնահատականի տարածքը վտանգ չի ներկայացնում: Տարածքի համալիր գնահատականը՝ բարենպաստ:

Նշված համայքները գտնվում են Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածքում: Գետերի մեջ նշված համայնքների տարածքում թափվում են տնտեսակենցաղային հոսքաջրերի մի մասը, ինչը հանդիսանում է գետի աղտոտվածության հիմնական աղբյուրը: Տնտեսակենցաղային հոսքաջրերի մաքրման համար գյուղական համայնքներում, նախատեսված է տեղադրել տարբեր արտադրողականության «Յալմա-2000» մակնիշի կենսաբանական մաքրման կայան /քննարկման կներկայացվի նաև տեղական արտադրության մաքրման կայան/: Մաքրման կայանը ունի բազմաստիճանային մաքրման կառուցվածք և ներառում է սեպտիկ խուց, անաերոբ կենսաբանական ռեակտոր, կենսազտիչ առաջին և երկրորդ աստիճանի օդավորման ավազան (աերոտենկ), երկու պարզարան, պոմպային հատվածամաս: Մաքրման արդյունավետությունը 98%: Կայանի կորպուսը կարող է պատրաստված լինել պողպատից կամ պոլիպրոպիլենից: Նստվածքի հեռացումը կատարվում է երկու տարին մեկ անգամ: Նստվածքը կարող է օգտագործվել որպես պարարտանյութ: Հնարավոր է

մաքրման կայանը փոխարինել ուրիշ նույն մաքրման աստիճան ունեցող ինքնավար կենսաբանական մաքրման կայանով: Գետեր թափվող հոսքաջրերի հետևանքով շրջակա ջրային ավազանին հասցված տնտեսական վնասը կենսաբանական մաքրման կայանների առկայության դեպքում զգալիորեն նվազում է: Գետերի համար ստացված ինքնամաքրման K=0.13 ցուցանիշի դեպքում, խառնուրդների նոսրացման համար պայմանները գնահատվում են որպես անբավարար, իսկ գետի ինքնամաքրման պոտենցիալը՝ ցածր: Գետերը նշված համայնքների հատվածում դասվում է 3-րդ դասին (միջակ): Նկատվում է կախված մասնիկների, երկաթի և ալյումինի իոնների և մոլիբդենի կոնցենտրացիաների գերազանցում թույլատրելի նորմերից: Կենսաբանական մաքրման կայանները կանխարգելում են գետի աղտոտվածության հետագա ավելացումը: Գետերի աղտոտվածության մակարդակը հեռանկարում կմնա անփոփոխ:

Նշված համայնքների սահմաններում, գետերի ջրերի աղտոտվածության մակարդակը կգնահատվի՝

- Ըստ սանիտարական ռեժիմի՝ բարձր,
- Ըստ զգայարանական ցուցանիշների՝ արտակարգ բարձր,
- Ըստ սանիտարա-թունաբանական ցուցանիշների՝ արտակարգ բարձր:

Բերված տվյալները վկայում են այն մասին, որ ծրագրով նախատեսված մաքրման կայանների առկայությունը կկանխարգելի նշված գետերի հետագա աղտոտումը:

«Շիրակ-3» համայնքներում հեղեղատար կոյուղու բացակայության արդյունքում գարնանային ձնհալի և աշնանային հորդ անձրևների ժամանակ հնարավոր են տարածքների հեղեղումներ, սակայն ինչպես նշվեց մաքրման կայանների համար, հեղեղատար կոյուղիների համար ևս լուծումները նույնն են գյուղական համայնքների համար:

Համայնքի տարածքի գեոքիմիական գնահատման արդյունքները ցույց են տվել, որ հողերը աղտոտված չեն ծանր մետաղներով: Հողերի աղտոտվածության մակարդակը գնահատված է ցածր (խտության գումարային ցուցանիշը՝ ԽԳՑ<16), աղտոտվածության դասը – թույլատրելի, էկոլոգիական իրավիճակը բավարար: Հեռանկարում տարածական պլանավորման նախագծերի իրականացման արդյունքում հողերի աղտոտվածության մակարդակի ավելացում չի սպասվում, քանի որ արդյունաբերական ձեռնարկությունների կառուցում չի նախատեսված:

«Շիրակ-3» համայնքներում որոշված է գոյություն ունեցող աղբավայրերի տարածքները պարսպապատել, բարեկարգել: Աղբահանությունը դարձնել կազմակերպված, այրել և հողով ծածկել, մինչև ամբողջ համայնքների համար աղբամշակման գործարանի նախագծումը և կառուցումը:

Հեռանկարում բնակչության թիվը կկազմի 6140 մարդ: Թափոնների ընդհանուր քանակը հեռանկարում կկազմի մոտ 2288,6 տ/տարի:

«Շիրակ-3» համայնքներում ծրագրով նախատեսված է գերեզմանոցների պարսպապատում ՍՊԳ-ի չափերով հետագա հուղարկավորումների ընթացքում այն չխախտելու համար: Այն հատվածներում, որտեղ ՍՊԳ-ն պահպանված չէ, նախատեսվում է ճանապարհի երկկողմանի սահմանազատում՝ ծառուղիների միջոցով և գերեզմանոցի պարագծով երկշարք ծառապատում: Գերեզմանոցների ճանապարհի եզրային հատվածներում, նախագծով նախատեսված է տարածքի բարեկարգում և կանաչապատում, ինչը կնպաստի փոշու արտանետումների տարածման կանխարգելմանը: Բնակավայրերում գտնվող գերեզմանոցների տարածքը բավարարում է նորմատիվ 2.4ք.մ պահանջներին, նոր գերեզմանոցների տարածք չի նախատեսվում:

«Շիրակ-3» գյուղական համայնքների վարչական սահմաններում եղած գյուղատնտեսական հողերի սեփականաշնորհման հետ կապված, հողօգտագործողները

մասամբ փոխել են կոլտնտեսային-սովխոզային պտղատու այգիների ֆունկցիոնալ նշանակությունը (հատուկ նշանակության կանաչ տարածքներ): Բնակչության սեփական հողատարածքներում աճեցվում են բանջարանոցային, հացահատիկային և այլ մշակաբույսեր: Ներկա դրությամբ գյուղական համայնքներում ընդհանուր օգտագործման կանաչ տնկարկները (զբոսայգիներ, պուրակներ) բացակայում են: Շինարարական նորմերի համաձայն, ինչպես նաև ՀՀ կառավարության 8 փետրվարի 2018 թվականի N 108-Ն որոշման համաձայն ընդհանուր օգտագործման կանաչապատված տարածքների մակերեսի նորմերը գյուղական համայնքներում ընդհանուր օգտագործման կանաչ գոտիների մակերեսը պետք է կազմի 12 մ²/մարդ: Հաշվի առնելով բնակավայրերի հողային ֆոնդի առկայության ցուցանիշները հեռանկարային զարգացման համար «Շիրակ-3» ՄՄՀՏՊՓ տարածքում ընդգրկված բնակավայրերի ընդհանուր օգտագործման տարածքների միջինացված ցուցանիշը նախատեսված է՝ 12.78 մ²/մարդ:

Պատճառաբանական մաս. «Շիրակ-3» ՄՄՀՏՊ փաստաթղթում ընդգրկված 10 գյուղական բնակավայրերի համար առաջարկված քաղաքաշինական լուծումների իրականացման և շրջակա միջավայրի պահպանության արդյունավետ կազմակերպման համար, ՇՄԱՌԳ հաշվետվությունում համալիր կերպով գնահատվել են առկա բնապահպանական խնդիրները, գոյություն ունեցող իրավիճակը և ընտրվել զարգացման այնպիսի սկզբունքներ, որոնց միջոցով հնարավոր կլինի ներդաշնակորեն լուծել սոցիալական, տնտեսական և բնապահպանական խնդիրները:

Քանի որ նախագծով նախատեսված միջոցառումներն իրականացվելու են արդեն իսկ կառուցապատված բնակելի տարածքներում, հետևաբար նախագծված համակարգերի վերակառուցման աշխատանքների ազդեցությունները կկրեն լոկալ և ժամանակավոր բնույթ, իսկ բուսատեսակներին և կենդանատեսակներին հասցվող վնասը՝ նվազագույն:

Փաստաթղթի փորձաքննական գործընթացին մասնակցել են «Առողջապահության», «Արտակարգ իրավիճակների», «Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» նախարարությունները, Կադաստրի կոմիտե, Շրջակա միջավայրի նախարարության համապատասխան ստորաբաժանումները, Շիրակի մարզպետարանը, որոնց կողմից ներկայացված դիտողություններով և առաջարկություններով ՇՄԱՌԳ հաշվետվությունը լրամշակվել է:

Ծրագրի ազդեցության ենթակա համայնքի և բնակավայրերի հանրությունը հանրային քննարկումների ձևով մասնակցել է հաշվետվության գնահատման և փորձաքննական գործընթացներին:

«Շիրակ-3» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծը ներառում է մշտադիտարկում (մոնիթորինգ) և հետնախագծային վերլուծություն, ինչը թույլ կտա հիմնադրույթի գործունեության ընթացքում վերլուծել և դիտարկել համայնքների զարգացման իրատեսական սցենարները՝ քաղաքաշինական փաստաթղթերում ներառել տնտեսության զարգացման առավել իրատեսական ոլորտներ՝ տարածաշրջանի բնապահպանական պահանջների, նորմերի և սահմանափակումների համադրմամբ ապահովելով մարդու առողջության, բնականոն զարգացման և բնառեսուրսների ռացիոնալ օգտագործման հիմնախնդիրները:

Փորձաքննական պահանջ

Հիմնադրութային փաստաթղթի շրջանակներում նախատեսվող գործունեությունների ծրագրային և նախագծային փաստաթղթերը՝ մինչև իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Հայնախագիծ» ԲԲ ընկերության կողմից ներկայացված Շիրակի մարզի «Շիրակ-3» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի (ՄՄՀՏՊՓ) շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված պահանջի պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջին կարգի մասնագետ՝ Նելլի Մովսիսյան